<<Երևանի Լեոյի անվան համար 65
ավագ դպրոց>> ՊՈԱԿ
Հետազոտական աշխատանք

Թեմա
Երգիծական միջոցներն ու հնարքները <<Մեծապատիվ մուրացկաններ>> վեպում

Կատարող՝ Ի.Նազարեթյան

Ղեկավար՝ Ա. Աբելյան

Ներածություն

Թերություններու վրա լալն թերություններու մեծագույնն է. Խեղճության վրա արտասուք թափելն ապացույց է, թե արյուն չունինք թափելու:

(Հ. Պարոնյան)



Պարոնյանի երգիծանքը համապարփակ է և ընդհանրության մեջ կազմավորում է ծիծաղի փիլիսոփայության ողբերգական ձևը. դա յուրովի անդրադարձնում է թախծի համամարդկային արձագանքը: Հակոբ Պարոնյանի գեղարվեստական երկերը ռեալիստական են թե՛ ձևի թե՛ բովանակակության տեսակետից: Հեղինակը վերցնում է կոնկրետ իրականությունը և զերծ է ռոմանտիկական ձևերից: Պարոնյանը իր հզոր տաղանդի միջոցով ծաղրն ու ծիծաղը դարձնում է միջոց ժամանակի հասարակական կյանքում անհատի հոգեբանության մեջ տեղի ունեղոց բացասական երևույթները արտահայտելու համար: Շոշափում է հայակական կյանքի գրեթե բոլոր իրողությունները, ներկայացնում հասարակական մի ստվար շերտի սոցիալական անապահով վիճակը, ովքեր գետնում են իրենց արժանապատվությունը ոսկու և աղքատամտության առջև:

Պարոնյանի ծաղրը երբեմն խիստ է ու անողոք, բայց և այնպես միշտ դիպուկ ու շեշտակի: Այս վեպը բոլոր ժամանակների համար արդիական է, ուր տեսնում ենք անհատի և հասարակության ժամանակի և տարածության, անցյալի ու ներկայի հանդիպադրությունը:

Երբ լույս տեսան <<Մեծապատիվ մուրացկանների>> առաջին տետրերը, ընթերցողը լիաթոք ծիծաղով ընդունեց այդ անմահ երկը՝ նրա մեջ տեսնելով արևմտյան իրականության ճշմարիտ անդրադարձումները: Շարունակելով <<Ազգային ջոջերի>> թեմատիկան, Հակոբ Պարոնյանն այստեղ արդեն շոշափել է հայ միջին խավի մտավորականության և արհեստավորների անմխիթա վիճակը ազգային հասարակական կյանքի համայնապատկերի վրա: Վիպակի հերոսները խմբագիրը, գրողը, լուսանկարիչը, ուսուցիչը, բժիշկը և մյուսները, բացառությամբ Աբիսողոմ աղայի, տխուր ճակատագիր ունեցող մարդիկ են, հասարակական նողկալի պայմանների զոհեր, որոնք իրենց հանապազօրյա հացը մուրում են գետնաքարշ ստորացումով: Պարոնյանը մորմոքուն ցավով է երգիծել վշտի ու կարիքի մեջ խեղդված ազգային այդ գործիչներին՝ նրանց կոչելով <<Մեծապատիվ մուրացկաններ>>՝ ոչ այնքան սպանիչ ծաղրի ենթարկելու, որքան, ինչպես ինքն է նշում, հայ մտավորականի ու արհեստավորի սոցիալական թշվառությունը ներկայացնելու համար: <<Մեծապատիվ մուրացկաններում>> կոնֆլիկտը ծավալվում է հացի խնդրի շուրջը, խնդիր, որ տակնուվրայել է բոլորի բարոյական աշխարհը: Այո, դա է միջին ու ցածր խավերի մարդկանց հասցրել ստրկամտության, ոտնահարել նրանց արժանապատվությունը, ծնկի բերել ոսկու տերերի առաջ: Պարոնյանի այս երկը երգիծական խոսքի մի շտեմարան է՝ թեմատիկ-գաղափարական սուր հարցադրումներով ու գեղարվեստական ձևերի անհատնում հարստությամբ: <<Մեծապատիվ մուրացկանները>> վիպակում և ընդհանրապես Պարոնյանի երգիծական արվեստում գլխավոր գործող անձը ծիծաղն է, որը, ինչպես նշել է մեծ գրողը, ծնվել է ոչ <<փափուկ ստամոքսների տեր ընթերցողներուն մարսողության>> ծառայելու և <<ոչ ալ քիչ կերակուր ուտողներուն ախորժակը>> բանալու այլ՝ իարականության հետ կապվելու և կենսական ճշմարությունը հաստատելու համար: Ինքը հիանալի է բանաձևել ծիծաղի գեղագիտությունը. <<Մոլորուններու վրա ծիծաղիլն առաքինության ճանբուն մեջ գտնվիլ կենթադրե և, այս հաշվով, որքան շատ ծիծաղ քաղեմ՝ այնքան նվազ մոլություն պիտի գտնեմ>>:

<<Մուրացկաններում>> ծիծաղն ոչ միայն այն հզոր ուժն է, որի անկողմնակալ դատաստանի առաջ կանգնում են հասարակական տարբեր խավերի մարդիկ իրենց սոցիալական հոգեբանությամբ և վարքագծով, այլև այն միայն հնարավոր միջոցը, որով գրողը ճանաչել է կյանքը՝ իր կոմիկական դրսևրումների մեջ, գրոհել բոլոր ուղղություններով չխնայելով ոչ մեկին՝ արհեստավորից մինչև հայ աղաները, թաղականից մինչև սիրո աճուրդով ապրող կինը, միջին խավի լիբերալ մտավորականից մինչև հոգևոր դասը: ամեն տեսակ չարիքներ ծնող հասարակական միջավայրին Հակոբ Պարոնյանը հակադրել է սատիրական ահեղ ծիծաղը կոմիկական հնարքների ու միջոցների կախարդական զորությամբ է արարված <<մուրացկանների>> աշխարհը:

<<Մուրացկանների>> գեղարվեստական հմայքը առաջին հերթին պայմանավորված է խոսքի կոմիզմով: Իրոք, թվում է, թե Պարոնյանի գրչի տակ կոմեդիական աղով է շաղախվել մեր լեզվի ողջ բառագանձը: Ոչ մի սեթևեթանք: Ամեն մի բառից հորդում է հոմերական ծիծաղը: Այն ընթերցողի ներաշխարհն է խուժում այնպես հաղթական, որ հոգիդ լցվում է կենարար շնչով շրջապատդ՝ ծիծաղով: Այստեղ բառի կոմիկական ուժը մագնիսականան է՝ հակադիր բևեռները ծայրահեղ լարվածությամբ: Որքան դիպուկ է ասված գեղարվեստական խոսքի մասին. <<Ինչ բան է. մեղր չէ, բայց բոլորին կպչում է>>: Այպիսին է Պարոնյանի արվեստում բառը: Ընդ՝ որում մեծ գրողը առանձին ջանք չի թափում յուրահատուկ բառեր ու արտահայտություններ գտնելու, որպեսզի ծիծաղ հարուցի, երգիծի որևէ երևույթ: Նա երգիծական տիպականացման է հասնում խոսքի պատկերային ընդհանուր համակարգում, սյուժետային բնական ընթացքով, ինչ-որ մի ներքին պաթոսով, որը հատուկ է նրանց, ովքեր, ինչպես կասեր Բելինսկին, բանստեղծ են ծնվում: Ահա մի պատկեր: Տիկին Շուշանն, երկար-բարակ առևտուր անելուց հետո, տխմար վաճառականին ասում է.

-Շատ լավ, աղջիկը ճերմա՞կ գույն ունենա, թե քիչ մը թուխ:

-Ճերմակ կուզեմ:

-Աչքերը սև՞, թե կապույտ:

-Եկուր տես, որ սևն ալ կսիրեմ, կապույտն ալ…

-Կամ մին պիտի ըլլա, կամ մյուսը. վասնզի չկրնար ըլլալ անանկ աղջիկ մը, որուն մեկ աչքը կապույտ ըլլա, մյուսը՝ սև:

-կապուտ ըլլա թող:

-Շատ լավ:

Երգիծական կատարյալ պատկեր: լակոնիկ հարց ու պատասխանի միջոցով ստեղծված է երկու կոմիկական դիմանկար: Մեկը՝ Աբիսողոմ աղա, բարոյապես փտած ու աղքատամիտ, մյուսը՝ միջնորդ կինը, <<այրերուն կին>>, <<կիներուն այր>> մատակարարող:

<<Մեծապատիվ մուրացկաններ>> երկում խոսքի կոմիզմը ինքնանպատակ չէ, այլ հասարակական ու սոցիալական հիմնվորում է ստացել: Այսպես՝ տարբեր ձևով են մտածում ու խոսում բեռնակիրներն ու արհեստավորները, մտավորականներն ու Աբիսողոմ աղան, թաղականն ու նրա կինը, քահանան ու Շուշանը: Փոխվում է պատկեր-կերպարը, փոխվում է և խոսքի կոմիզմի տարողությունն ու հնչերանգը: Եթե մշակների խոսքը պարզ է ու շիտակ, ապա <<մուրացկաներին>> հատուկ են խոսքի երկդիմությունը, ճղճղան ծամածռությունները, շրջասությունը, կեղծավորությունը:

Հայ բեռնակիրների լեզվամտածողությունը աշխատավորի հոգեբանության արգասիքն է՝ պարզ ու վճիտ իրենց վաստակած հացի նման: Ինչպես են նրանք խոցվում, երբ իրենց շիտակ մտքերը նենգափոխվում են: Մինչդեռ բացասական կերպարները շռայլում են բառեր տեղի-անտեղի, շաղակրատում անամոթաբար, միայն թե կարողանան թակարդել Աբիսողոմ աղային և ոսկի կորզել: Ընդ որում նրանցից յուրաքանչյուրն ունի իր արհեստին բնորոշ խոսելաձև, որը ոչ միայն վիպակին հաղորդել է բազմերանգություն, նյութը դարձրել աշխույժ ու հետաքրքիր, այլև հերոսներին օժտել է անհատական տիպական գծերով: Բերենք մի երկու օրինակ:

Ահա խմբագրի խոսքը, որը համակ կեղծիք է ֆրազաբանություն: Այսպես կարող է ճամարտակել միայն լիբերալ մամուլի ներկայացուցիչը՝առանց խղճի խայթի սևը ներկայացնելով սպիտակ, սպիտակը՝ սև:

-Դու՞ք եք Աբիսողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգենավով եկաք, ինչպե՞ս եք, ձեր եղբայրն ինչպե՞ս է, ազգային գործերն ի՞նչպես են Տրապիզոն հացին գինը քանի՞ է հոն, անձրև եկա՞վ այս օրերս ձեր քաղաքը...վայ, Աբիսողոմ աղա վայ...

Նա այսպես շռայլում է բառամթերքը, որպեսզի հասնի իր նպատակին՝ վաճառականից մի քանի ոսկի կորզի: Եվ ինչ, Աբիսողոմ աղան մեծարվում է <<պատվական ազգասեր մը>>, <<ուսյալ կրթյա>>, <<լեզվագետ>> և նման բարձր տիտղոսներով, այն դեպքում, երբ այդ մարդուկը դրանցից և ոչ մեկը չունի: Իրավունք ուներ Աբիսողոմ աղան նրա երեսին նետելու՝ <<Սնտուկներուս մեջ ատանկ բաներ չկան>>:

Արևմտահայ իրականության կոլորիտն իր ողջ գունագեղությամբ ծիածանվել է Մանուկ աղայի խոսքում: Հայ թաղական... երգիծական հոյակապ վրձնով է քանդակված նրա կերպարն իբրև դատարկախոսի մարմնացում: Ազգային այս գործիչը ընդունակ է միայն խոսելու անվերջ ու անիմաստ: Նրա ատենաբանությունը լեցուն է արտնին բամբասանքներով: Նրա կերպարում ցոլացել է հայ թաղականի գործունեությունը: Խոսքով ծառայել ազգին, գործով՝անձական հաշիվներ մաքրել, եվ այսպես, <<Մեծապատիվ մուրացկանների>> բոլոր հերոսներն ունեն իրենց հատուկ բառապաշարը: Նրանք հաճախ են համեմում մտքերը հատուկ արտահայտություններով: Օրինակ, Մանուկ աղան սիրում է ասել <<ականջը խոսի>>, <<աղեկ ըսիր>> : Քահանան իր խորհրդավոր մտքերը պարուրում է վերցրած <<Տեր Աստված զձեզ համենայն փորձանաց և ի չարէ ազատ պահեսցէ>> և նման պատվիրանով : Կամ՝ գրեթե բոլոր Աբիսողոմ աղային դիմելիս օգտագործում են հատուկ վերամբարձ ոճ մեծապատիվ տեր, ձեր գալուստը լսելով փութացա հոս գալ... և այլն:

Վիպակին մի առանձին հմայք է հաղորդում առօրյա խոսակցական լեզվամտածողությունը: Շուշանն ասուն է. <<Ես հոգիս սնցունել չեմ ուզեր>>, և այն դեպքում, երբ ամբողջ կյանքում սիրո առևտրով է զբաղվել: Մանուկ աղայի կինը թաղականների հասցեին մտմտում է. <<Աստծումե գտնան այն թաղականներն ալ, որ ամենուս խեղճությանը պատճառ կըլլան կոր>>: Ոչ առանց լիաթոք ծիծաղի կարելի է կարդալ հետևյալ արտահայտությունները. <<քաշելիք ունենք եղեր>>, <<Գնա քեզի բարկացնողին զրուցե այդ խոսքերը>>, <<եթե ձեզի գավաթ մը օղի

տամ, կտնկեք>> և այլն: Դրանցից շատերը ձեռք են բերել իդիոմատիկ իմաստ: Այսպես օրինակ՝ <<հառաջադիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կպոռանք և դեպի խավար կերթանք, աջ կը կոչենք և դեպի ձախ կերթանք, ապագա կըսենք և դեպի անցյալ կվազենք»: Կամ՝ <<փառասիրությունն ալ տեսակ մը անոթություն է, զոր դրամով կը կշտացնեն մարդերը>>:

<<Մեծապատիվ մուրացկանները>> երկում խոսքի կոմիկականության կարևոր դրսևորումներից մեկն էլ այն է, որ հերոսների դատողությունները տրամաբանական չեն: Հիշենք թեկուզ բանաստեղծի ատենախոսությունը կամ լուսանկարչի անսեթևեթ մտքերն այն մասին, թե ինչու է անհրաժեշտ Աբիսողոմ աղային նկարվելը: Աբիսողոմ աղայի խոսքն ամբողջությամբ անտրամաբանական է: Նրա ամեն մի արտահայտությունից ժայթքում է սատիրական քրքիջ: Ինչպե՞ս կարելի է չծիծաղել, երբ լուսանկարչի մեկնելուց հետո նա Մանուկ աղային հարցնում է.

-Եթե պատկերս քաշել չտամ, զիս մարդու տեղ չե՞ն դներ:

Կամ՝

-...Ագարակներս կառնե՞ն ձեռքես...Ոչխարներս, կովերս կը հափշտակե՞ն:

<<Մուրացկաններում>> բացառիկ նրբությամբ են ներդաշնակված գործողության և վիճակի կոմիզմները՝ կազմելով կենդանի ամբողջություն: Եվ այսպես ողջ հասարակական կյանքը վիպակում բեկվել է կոմիկական շարժման մեջ: Բավական է, որ իմացան մեծահարուստ Աբիսողոմ աղայի ժամանումը Պոլիս, և ահա բոլորը շտապում են բոպե առաջ ներկայանալ նրան՝ մի քանի դրամ փախցնելու հույսով: Եվ քանի որ նրանց արարքները անհարիր են իրենց կոչմանը, տիտղոսներն, ուստի և ընկնում են զավեշտական, հաճախակի էլ քստմնելի իրավիճակի մեջ:

Հայտնի է, որ երևույթն ինչքան էլ արգահատելի լինի, կարող է ամենևին էլ ծիծաղելի չլինել: Ծիծաղելի կդառնա միայն այն ժամանակ, երբ նրա բովանդակության և դրսևորման միջև գոյություն կունենա խոր հակադրություն: Չերնիշևսկին այդպես էլ բնութագրել է կոմիկականի կատեգորիան, <<Իսկապես ասած, -գրել է նա, -այլանդակը մեզ անհեթեթ է թվում այն ժամանակ միայն, երբ

կանգնում է ոչ իր տեղում, ուզում է թվալ ոչ այլանդակ և միայն այն ժամանակ իր համար հավակնություններով, իր անհոգ փորձերով առաջ է բերում մեր ծիծաղը>>:

<<Մուրացկանների կոնֆլիկտի հիմքում դրված են նման հակադրություններ, որոնք ոչ թե կամայականորեն փաթաթված են այս կամ այն կերպարի վզին, այլ օբյեկտիվորեն բխում են նրանց սոցիալական վարքագծից: Հենց դրանք են, որ խթանում են գործողությունների զարգացումը՝ ստեղծելով կոմիկակա վիճակներ: Վիպակում բոլորը բացի, բեռնակիրներից, գործում են դիմավորված, ասում են մի, բան անում՝մի այլ բան: Ինչպիսի գերագույն կեղծավորությամբ են փորձում նրանք ծածկել իրենց ստրկամտությունը, էժան վաճառել ուրենց մարդկային արժանապատվությունը, չխորշելով, սակայն, վեհ ու գեղեցիկ կոչումներից ազգային խմբագիր, ազգային բանաստեղծ, ազգային բժիշկ, նույնիսկ՝ ազգային վարսավիր, ազգային միջնորդ կին և ուրիշներ: Բանաստեղծի, նկարչի, ուսուցչի, դերասանի, բժշկի արարքները, որոնք այնքան ծիծաղելու են, տրամաբական հետևանք են այն կենսապայմաններին, որոնց մեջ ապրում են նրանք: Ի՞նչ էր մնում ծամածռություններ անել մի քանի կոպեկ կորզելու ակնկալությամբ: Իր վարքագծի սոցիալական արդարացումը հիանալի տվել վիպակի հերոսներից մեկը՝ բժիշկը. <<Չեք կարող երևակայել, Աբիսողոմ աղա՛, թե որչափ հուսահատած եմ. հազար անգամ զղջացած եմ, երկու հազար անգամ անեծք կարդացած եմ բժիշկ ըլլալուս համար. ու՛ր էր, թե բժիշկ ըլլալու տեղը հիվանդ ըլլայի և...մեռնեի>>:

Այսպես կարող էին ասել և մյուս Մեծապատիվ <<մուրացկանները>>, որոնք տնտեսական կարիքը ծնկի է բերել, դարձրել ողորմելի: Հ. Պարոնյանը, ծաղրելով ազգային այդ գործիչների վարքը, իր երգիծանքի սուր ծայրերը հատկապես ուղղել է Աբիսողոմ աղայի դեմ՝դնելով նրան ամենակոմիկական գործողությունների և հոգեվիճակների մեջ: Փաստորեն նրա շուրջն են պտտվում հիմնական կոնֆլիկտը: Իբրև մարդ, Աբիսողոմ աղան չունի բարոյական գեղեցիկ աշխարհ, տգետ է, հետամնաց, բայց ֆինանսապես հզոր, սոցիալապես՝ վտանգավոր: Այս կերպարը ծիծաղելի է, և՛ իր էությամբ, և իր՛ նպատակներով: Կարևորմ այն է, որ նա զգում է իր ոչնչությունը, զինաթափ է լինում Պարոնյանի ծիծաղի առաջ: Ահա այդ թիկնոցաբնակը քայլում է մայրաքաղաքի փողոցներով: Եվ ինչ...Առաջին անգամ

նա լիբերալ խմբագրից լսել է իր անձնավորության բացառիկության մասին և հավատացել, որ իսկապես ինքը <<ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագետ, ուսումնական, դաստիրակյալ, կրթյալ>> ոմն է, որ հայ ընտանիքներում պիտի վիճեն. թե ում աղջիկը առնի իրեն: Պարոնյանի հերոսն այնքան է մոլագարվել, որ երազում է ամուսնանալ տասնվեց տարեկան աղջկա հետ, որի աչքերից մեկը, իհարկե վատ չէր լինի, եթե սև լիներ, մյուսը՝ կապույտ: Դեռ ոտքը չդրած կառամատույց, Աբիսողոմ աղան դառնում է ծիծաղելիության չափ ողորմելի, զարմացած բազմաժխոր քաղաքի այն տագնապալից անցուդարձից, որոնք անհամեմատելի էին տգետ ու ինքնամփոփ գավառացի վաճառականի պատկերացումներին: Ինչպիսի անհեթեթ ու կոմիկական վիճակներ են սպասում Աբիսողոմ աղային փողոցում, երբ ընդհարվում է էշին, Աբիսողոմ աղայի տանը, ուր ծիծաղի լարվածությունը հասնում է ծայրահեղ չափերի, ստեղծում այնպիս շիկացած մթնոլորտ, որի մեջ մոխրանում են և՛ Աբիսողոմ աղան, և՛ նրան շրջապատող մարդիկ: Ի դեպ, նրա հեգեկան ջղային ապրումները ամենևին խղճահարության զգացումներ չեն առաջացնում ընթերցողի մեջ, ընդհակառակը, նա մի տեսակ բավարարված է զգում այն բանից, որ այդ տիպը կանգնած է պարոնյանական ծիրծաղի արդար դատաստանի առաջ, պատժվում է դաժանորեն: Դա յուրահատուկ սոցիալական վրեժ է հասարակական պորտաբույծ խավերի նկատմամբ:

Երգիծական վիճակ ստեղծելու հետաքրքիր հնարքներից է գործողությունների անսպասելի ընթացքը մի բան, որին նախապատրաստված չէ ընթերցողը, և որը չի համապատասխանում նրա պատկեացումներին: Այսպես օրինակ, Աբիսողոմ աղան սոված մտածում է ընթրիքի մասին, և ահա ներս է խուժում բանաստեղծը: Ոչ ոք չի ենթադրում, որ նա պետք է թռչի սեղանի վրա և սկսի իր անհամ ատենաբանությունը: Դա կատարվում է այնքան անսպասելի, որ անհնար է առանց լիաթոք ծիծաղի հետևել բանաստեղծի ամեն մի շարժ ու ձևին: Ամեն անգամ, երբ Աբիսողոմ աղան պատրաստվում է ինչ-որ բան անելու, նրա այդ մտադրությունն ընդհատվում է անսպասելի մի միջադեպով կամ ազգային մուրացկաններից որևէ մեկի երևալով: Դրան մեծապես նպաստել է սյուժեի և կոմպոզիցիայի յուրահատուկ կառուցվածքը: Լինելով երգիծական խոսքի

անզուգական վարպետ՝ Պարոնյանն ստեղծել է մի երկ, որտեղ գործող անձինք միմյանց հետ անմիջական հարաբերությունների մեջ չեն մտնում, այլ առանձին-առանձին ներկայացնում են իրենք իրենց և ապա, մի քանի ոսկեդրամ կորզելով, հեռանում: Դա հնարավորություն է տվել ուժեղացնելու գործողությունների դրամատիզմը, արագացնելու պատկերների հաջորդականությունը և ծաղրական երանգների փոփոխությունը: Կարելի է նույնիսկ դրանք իրարից անջատել բեմական վարագույրներով, իսկ հեղինակային միջամտությունները առնել շրջանակների մեջ:

Պարոնյանի երգիծական արվեստում իրականության ճանաչման հիմնական եղանակներից մեկն էլ կոմիկական չափազանցությունն է, որը թեև միտումնավոր սրում է երևույթների որևէ գիծը, բայց ավելի որոշակի ցցուն է դարձնում նրանց այլանդակությունն ու վնասակարությունը: Սակայն, որքան էլ նա չափազանցնում է, այնուամենայնիվ, հավաստիության պատրանքը կասկածանքի տեղիք չի տալիս: Այստեղ չափազանցված են բոլոր բնավորությունները, նրանց գործողություններն, ու հոգեվիճակները, գեղարվեստական պատկերավորման եղանակներն ու միջոցները: Պարոնյանի երևակայությամբ ուռճացվել են իրական փաստերը, սակայն դրանք մնացել են չափի զգացման շրջանակների մեջ: Սա նրա երգիծանքի մեծագույն արժանիքն է: Ահավասիկ Աբիսողոմ աղայի կերպարը, որի բացասական գծերը խտացվել են գերհզոր երևակայությամբ: Չափազանցվել, գրոտեսքային գույներ են ստացել նրա ամեն մի շարժ ու ձևը, արտաքին նկարագիրն ու մտավոր կարողությունները սակայն ո՞վ կկասկածի դրանց իսկությանը:

<<Մեծապատիվ Մուրացկանները>> վիպակում երգիծական համակարգի հարստությունը պայմանավորված է նաև լեզվի պատկերավորման միջոցների հարստությամբ: Այստեղ գործածված երգիծական համեմատություններն ու մակդիրները, զուգահեռները ու համադրությունները, այլաբանություններն ու շրջասույթները ոչ միայն հիանալի բնորոշում են հերոսների այս կամ այն գիծը զարմանալի դիպուկ են ճշմարտացի ու շոշափելի, այլև դրանք հույժ կոմիկական են: Որպեսզի ամբողջականացնի անտաղանդ բանաստեղծի կերպարը Պարոնյանը դիմել է պարադոքսային մի համեմատության: Ահա այն.

<< Աբիսողմ աղային ներկայացուցավ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նամներ գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կը նմաներ որուն, նմանը չկա>>: Թվում է, թե երգիծաբանը համեմատության ծայրաբևեռների հակադրության ցանակցել է ծիծաղ հարուցել մինչդեռ նման եղանակով ավելի են ընդգծել մի կողմից հայ գրողի անմխիթար վիճակը, մյուս կողմից գրոտեսքի է ենթարկել իրենց բանաստեղծ հորջորջող գրչականի արտաքին պատկերը: Ընդհանրեպես Պարոնայանը կարողանում է մի սրամիտ համեմատությամբ մերկացնել այլանդակը ու վնասակարը, հակասական երևույթներն ու մարդակային արատները:

Ոչ պակաս հետաքրքիր են անսովոր մակդիրները, որոնցից շատերը վաղուց մտել են ժողովրդական խոսակցության ոլորտը: Այսպես՝ պատվական փողոց, պատվական միս մը, սիրո տետրակին մեջ, բանդագուշական կենսագրություններ և ալն:

<<Մուրացկաններում կոմիզմի առատ աղբյուր են դարձել անսպասելի հարցադրումները: Այսպես, անհանար է չծիծաղել, երբ իրար են առդրվում Աբիսողոմ աղան և նրա շարժական ու անշարժ գույքը: Աբիսողոմ աղան պահանջում է թերթում, բանստեղծության մեջ, նկարում երևալ իր կովերի, էշերի, եզների ծառաների, ագարակների ընկերակցությամբ՝ ոսկե ժամացույցն էլ վզից կախ: Երգիծական հնարքներից ուշագրավ են թյուրիմացության կամ խոսակցի մտքերի սխալ ընկալման վրա կառուցված խոսքը, առանձին բառերի ոչ ճիշտ մեկնաբանությունը կամ նրանց ուղղակի նշանակությամբ հասկանալը, որոնք ոչ միայն կերպարների անհատականացման հիանալի միջոցներ են, այլև սյուժեն շաղախել են երգիծական կոլորիտով՝ հաղորդելով նրանց սոցիալական երանգ: Որքան թերի կլիներ Աբիսողոմ աղայի կերպարը, եթե Պարոնյանն աչքաթող աներ, ասենք, այնպիսի մի <<մանրուք>>, ինչպիսին քթի հետ կապված թյուրիմացությունն էր /<<…զույգ մի քթեր…չէ, չէ մեկ քիթով>>/: Կամ՝ եթե չլներ այն պատկերը, երբ տգետ վաճառականը, որին խմբագիրը մեծարում է ամենաբարձր տիտղոսներով, չի հասկանում, թե ինչ բան է ընկալագիրը: Մի այլ տեսարանում բանաստեղծը առաջարկում է գրել ոտնավոր՝ նվիրված Աբիսողոմ

աղայի կովերին, ոչխարներին, էշերին և ագարակներին: Շարժվում է վերջինիս աղայական փառասիրությունը, ուստի ուզում է օր առաջ տեսնել այդ ոտնավորը: Սակայն բանաստեղծը, իր արհեստի արժեքը թանկացնելու նպատակով, պատճառաբանում է, որ շուտ չի կարող գրել, քանի որ մուսան երկու ամիսը մեկ է հայտնվում իրեն: Այնժամ հետևում է Աբիսողոմ աղայի աղերսական հարցը. <<Ով է ուրեմն սա գետնին տակն անցնելու մարդը… ուսկի՞ց պիտի գա, որ ճամփա մը մտմտանք ու բերել տանք… եթե մեկ երկու ոսկի տանք, այս շաբաթ կուգա՞>>

Եվ սա ասված է այնքան անկեղծ, որ չես կարող չպոռթկալ, աչքիդ առաջ տեսնելով մի մարդու, որը համակ տգիտություն է: Պարոնյանը սպանիչ հեգնանքի է ենթարկել Աբիսողոմ աղայի մարդակային ողջ էությունը: Նրա մտմտունքները, հարցերն ու պատասխանները կատարյալ անհեթեթություններ են՝ առլեցուն թունոտ ծաղրով: Պատահական չէ, որ ազգայի մուրացկանները անմիջապես կռահում են Աբիսողոմ աղայի մտքի տհասությունը, որից և բռնելով՝ ուռենու նման ծռմռում են այս ու այն կողմ, մոլորեցնում նրան և ապա դատարկում քսակը:

<<Մեծապատիվ մուրացականները>> երկում հասարակական խոր հնչեղություն ունի երգիծական ակնարկը, որով Հ.Պարոնյանը արտահայտել է իր գրական, քաղաքական-հասարակական համոզումները, սուր հեգնանքի ենթարկել այն ամենը, ինչը խորթ է եղել նրա դեմոկրատական իդեալներին: Դրանք երբեմն ասվում են հարևանցիորեն, սակայն՝ դիպուկ և նպատակասլաց: Բերենք մի քանի օրինակ: Թուրքական դաժան բռնապետությունը մերկացնող ակնարկ. <<Երանի անոնց, որ կը քնանան…բայց Պոլսո մեջ քնանալու ազատություն ալ չկա…>>:

Գրական մարդկանց անմխիթար վիճակն արտահայտող ակնարկ. <<Տաղանդն ու քանքարն առանց քաջալերության կը մեռնի>>:

Օտարամոլություն քամահրող. <<Ո՜հ, օտարականություն, օտարասիրությու՜ն…Ե՞րբ պիտի երթաս մեր քովեն>>:

Պարոնյանի երգիծական հանճարը նաև փայլատակել է կոմպոզիցիոն այնպիսի հնարքներում ու միջոցներում. Ինչպիսիք են երկխոսությունները և մենախոսությունները, կոմիկական բնութագրումներն ու հերոսների

ինքնաբնութագրումները, որոնցով տիպականացվել են ժամանակաշրջանը, միջավայրը, հասարակական բարքերը, մարդակային, մարդակային բնավորությունները՝ իրենց շոշափելի գծերով: Խուսափելով հեղիանակային <<միջամտություններից>>՝ երգիծաբանը խոսեցրել է իր հերոսներին, նրանց միջոցով հասել գեղարվեստական ընդհանրացումների, վեր հանել ժամանակի այլանդակ իրողությունները: <<Ծանր է ինձ խոստովանիլ, -գրում է Պարոնյանը, - թե մարդերը մարդկության համար չեն ապրիր: Ալմանիայի հռչակավոր իմաստասերն ըսած է, թե՝ հայենիքեն վեր մարդկություն կա. այսօր մարդկութենեն վեր շահ կա և մարդկութենեն վար՝ ոչինչ: Մարդկությունը պաշտպանողները այսօր ծաղու նշավակ կըլլան. հետևապես մարդկությունը սիրողը չէ կարող մարդերու մեջ ապրիլ>>:

Հ. Պարոնյանը պատկերին երգիծական հնչերանգ հաղորդելու մեծ վարպետ է: Դրան նպաստում են տրամաբանական հարցադրումներն ու բառական կրկնությունները, զարմացական կոչերն ու դիմումները, ինչպես նաև՝ առոգանության բացահայտության նշանները, որոնցով այնքան հարուստ է <<մեծապատիվ մուրացկանները>>: Պարոնյանի հերոսները սիրում են խոսել շրջասույթներով ու այլաբանությամբ: Հիշենք, թե ինչպես են որոգայթում Աբիսողոմ աղային. սկսում են հեռվից, ապա կամաց-կամաց մոտենում այցելության բուն նպատակին՝ օգտագործելով խորհրդավոր ու այլաբանական մտքեր:

Աբիսողոմ աղան Պոլսի ազգային մտավորականների ու արհեստավորների մասին ասում է. <<Ի՞նչ աներես մարդիկ են…այսչափ աներեսություն ոչ լսված բան է, ոչ այլ տեսնված>>: Իսկ ինչպիսի՞ թթվաշ ինքնաբնութագրումներ կան <<մուրացկաններում>>: Դրանք սիրտ խառնելու չափ զզվելի են: Խմբագիր, բանաստեղծ, քահանա, բժիշկ, փաստաբան և ուրիշներ ազգային մեծադղորդ տիտղոսների քողի տակ նսեմացնում են իրենք իրենց, տգետ կալվածատիրոջ ոտքերի տակ դնում իրենց մարդակային արժանապատվությունը՝ վերջինիս գութը շարժելու և մի քանի ոսկի կորզելու նպատակով:

<<Կը սիրեմ մարդկությունը, բայց ներեցեք անքաղաքավարությանս կատեմ մարդերը…տարակույս չունիմ, որ դուք ալ պիտի համոզվիք՝ թե մարդերու թերությունները տեսնելուս համար է որ չեմ սիրեր զանոնք և ոչ թե զանոնք չսիրելու համար անոնց թերությունները միայն կը տեսնեմ>>:

Հակոբ Պարոնյանը իր ծիծաղի փիլիսոփայությամբ ստեղծեց հայ երգիծաբանության ազգային դպրոցը՝ միանգամայն արժանի տեղ գրավելով համաշխարհային երգիծաբանության արվեստում:

Եզրակացություն

Այսպիոսով հանգում ենք այն փաստին, որ այսօրվա մտավորականը ոչնչով չի զանազանվում անցյալի մտավորակնից: Ներկայում էլ կան Աբիսողոմ աղաներ, ովքեր անտարբեր են ազգի ու մարդկության ճակատագրի հանդեպ, իսկ <<գրական մարդկանց ցանկությունները նրանց համար սոսկ անիմաստ զառանցանքներ են>>: Բոլոր ժամանակներում մտավորականներին կարիքը դարձրել է ողորմելի մուրացիկներ, որոնցից յուրաքանչյուրը իր էպիզոդային դերն է կատարում մի քանի դրամ կորզելու համար: Ցավալի է, բայց փաստ է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հ.Պարոնյան, հ.4, 1965, էջ 375-376
2. Մ.Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, Հայպետհրատ, Ե., 1945, էջ 73
3. Հ. Պարոնյան, հ. 3, 1964, էջ 63-64
4. Նույն տեղում, էջ 9
5. Չերնիշևսկի, էսթետիկա, 1953, էջ 303
6. Հ. Պարոնյան, հ. 3, Էջ 71
7. Հ. Պարոնյան, հ. 3, էջ 29-30
8. Հ. Պարոնյան, հ. 3, էջ 36
9. Հ. Պարոնյան, հ. 3, էջ 84